



## Տպագրվում է Երևանի պետական համալսարանի 90-ամյակի առթիվ:

### ՊԻՏԻՐԻՄ ՍՈՐՈԿԻՆԸ ԵՐՎԱՆԴ ՖՐԱՆԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Փիլիսոփա, հասարակագետ, հասարակական և քաղաքական գործիչ **Երվանդ Ֆրանգյանը** (1878-1928) XX դարի սկզբին Հայաստանում մեծ տարածում գտած փիլիսոփայական ուղղություններից մեկի՝ երկրորդ պոզիտիվիզմի (մախիզմ, էմպիրիոկրիտիցիզմ) խոշորագույն ներկայացուցիչն է, որի փիլիսոփայական հայացքները, սակայն, խորհրդային տարիներին զրեթե դուրս են մնացել ուսումնասիրողների ուշադրության շրջանակներից: Մինչդեռ Ե. Ֆրանգյանն այդ ժամանակաշրջանի հայ տեսական մտքի ակամավոր դեմքերից մեկն է, որը դեռևս իր կենդանության օրոք դուրս է եկել միջազգային ասպարեզ, և որի աշխատությունները ճանաչում են ստացել, բարձր գնահատվել ոչ միայն հայ, այլև օտարազգի մտածողների կողմից:

Երվանդ Ֆրանգյանը ծնվել է 1878 թ. Իգդիրում, սովորել ու աշխատել է Երևանի թեմական դպրոցում: Աշխատելով Թավրիզի թեմական դպրոցում և որպես ՀՅԴ կուսակցության անդամ մասնակցելով հասարակական-քաղաքական կյանքին՝ նա միաժամանակ ուսումնասիրություններ է կատարել Ատրպատականի պատմության, տնտեսական, ազգագրական կազմի մասին: 1920 թ. մինչև Հայաստանի խորհրդայնացումը, նա դասախոսել է Հայաստանի համալսարանում՝ որպես պրիվատ-դոցենտ (եղել է ԵՊՀ-ի առաջին դասախոսներից մեկը): 1921 թ. Փետրվարյան հեղաշրջման ձախողումից հետո նա մեկնել է Պարսկաստան, դարձել իր կազմակերպած Սուրմալուի փրկության կոմիտեի նախագահը, մասնակցել ճակատի պաշտպանությանը, ստանձնել Ղազվինի, Սուլբանապատի, այնուհետև Համադանի հայկական դպրոցների տեսուչի պաշտոնը: Մահացել է 1928 թ.: «Մեր փիլիսոփայական աշխարհայացքը» խոշորագույն աշխատությունը նրա փիլիսոփայական հայացքների համակարգված շարադրանքն է, որը լույս է տեսել իր մահից հետո (1929 թ.):

Ֆրանգյանը թողել է գիտական հարուստ ժառանգություն՝ փիլիսոփայության պատմությանը, համաաշխարհային և հայ սոցիալական փիլիսոփայությանը, մարդաբանությանը, պատմության փիլիսոփայությանը նվիրված բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ: Նրա փիլիսոփայական հայացքների ձևավորման վրա էական ազդեցություն են գործել Սոկրատեսը, Պլատոնը, Ֆիխտեն, Շոպենհաուերը, Նիցշեն, Մախը, Ավենարիուսը, Տոլստոյը, Միխայլովսկին:

Ֆրանգյանը հատկապես բարձր է գնահատում Ն. Կ. Միխայլովսկու տեսությունը, որի հասարակական-քաղաքական իդեալն անհատի ներդաշնակ ու համակողմանի զարգացումն է, և այդ իդեալի իրագործմանը պետք է ձգտի յուրաքանչյուր անհատ, յուրաքանչյուր հասարակություն: Այս իդեալը փիլիսոփայական-հասարակագիտական շատ հայեցակարգերի առանցքն է, որոնց

շարքում Ֆրանգյանն առանձնացնում է Միխայլովսկու տեսությունը, քանի որ վերջինս այն եզակի մտածողներից է, ում անձը, գործը և միտքը ներդաշնակ ամբողջություն են<sup>1</sup>: Այս տեսակետից հատկապես կարևոր է Ֆրանգյանի «Միխայլովսկին՝ որպես փիլիսոփա սոցիոլոգ» աշխատությունը, որը հրատարակվել է 1911 թ. Երևանում: 1912 թ. Բեռլինի համալսարանում Ֆրանգյանը նույն թեմայով դոկտորական թեզ է պաշտպանում և ստանում փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Այնուհետև գիրքը թարգմանվում է գերմաներեն և 1913 թ. լույս տեսնում Բեռլինում: Աշխատությունն անմիջապես մեծ արձագանք է գտնում՝ արժանանալով ռուս գիտական մտքի ներկայացուցիչների և հատկապես արդի սոցիոլոգիայի մեծագույն տեսաբաններից մեկի՝ Պիտիրիմ Սորոկինի ուշադրությանը<sup>2</sup>: 1914 թ. «Заветы» ամսագրում տպագրվում է Ֆրանգյանի աշխատության մասին Պ. Սորոկինի գրախոսական հոդվածը, որը նույնությամբ վերատպվում է «Նոր հոսանք»-ում: Հայ փիլիսոփային համաշխարհային մեծության այս մտածողի տված գնահատականը չափազանց կարևոր նշանակություն ունի հայ տեսական մտքի համար:

Ինտեգրալ սոցիոլոգիայի հիմնադիր Պիպիրիմ Սորոկինի (1889-1968) ստեղծագործական գործունեությունը պայմանականորեն բաժանվում է երկու փուլի՝ ռուսական (1912-1923 թթ.) և ամերիկյան (1924-1968 թթ.): Առաջին փուլում նա հանդես է գալիս նաև որպես հրապարակախոս. 1913-1917 թթ. նա համագործակցում է «Заветы», «Вестник знания», «Запросы жизни» ամսագրերի հետ՝ դրանց էջերում տպագրելով հոդվածներ սոցիոլոգիայի նորագույն նվաճումների մասին ու վերլուծելով Ն. Միխայլովսկու, Պ. Լավրովի, Պ. Կրոպոտկինի, Է. Դյուրքհեյմի, Մ. Վեբերի, Կ. Մարքսի և այլ հասարակագետների տեսությունները: Այս տեսակետից հատկանշական է, որ Սորոկինի ուշադրությունից չի վրիպում Ե. Ֆրանգյանի աշխատությունը Ն. Միխայլովսկու սոցիալփիլիսոփայական հայացքների մասին:

Համաշխարհային սոցիալփիլիսոփայական մտքի քաջագիտակ Սորոկինն իր հոդվածում ընդգծում է, որ թեև Միխայլովսկու տեսության վերլուծությամբ հանդես են եկել բազմաթիվ մտածողներ, այնուամենայնիվ Միխայլովսկուն նվիրված այդ հսկայական գրականության համապատկերում բարձր է գնահատվում Ֆրանգյանի աշխատությունը:

Ռուս սոցիոլոգ, հրապարակախոս և գրաքննադատ Նիկոլայ Միխայլովսկին (1842-1904) XIX դարի 70-ական թթ. Ռուսաստանում տարածված լիբերալ նարդոնիկության գլխավոր տեսաբաններից էր: Իր հայացքները նա շարադրել է «Ի՞նչ է առաջընթացը», «Դարվինի տեսությունը և հասարակական գիտությունը», «Վոլտեր-մարդը, Վոլտեր-մտածողը», «Հերոսներն ու ամբոխը» և այլ աշխատություններում: Պ. Լավրովի հետ Միխայլովսկին մշակել է «իդեալի» ազատ ընտրության գաղափարը, որը փիլիսոփայորեն հիմնավորում է մտավորականության նախընտրած ուղղությամբ հասարակական զարգացման փոփոխման հնարավորությունը: Այդ գաղափարն առավել լրիվ արտահայտվում է սոցիոլոգիական սուբյեկտիվ մեթոդի մեջ, որն անձը հռչակում է պատմական ուսումնասիրության ելակետ և հասարակական բոլոր երևույթների արժեքների

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս Ե. Ֆրանգյան, Ն. Կ. Միխայլովսկիյ (նրա մահուան տասնամեակի առիթով. 1904-1914), «Գործ», Բաքու, 1914, թիվ 2, էջ 2, թիվ 3, էջ 2-3:

<sup>2</sup> Այդ մասին տե՛ս Ե. Ֆրանգյան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը: Իրապաշտ փիլիսոփայութիւն. Հ. Յ. Դաշնակցութեան փիլիսոփայական աշխարհայեացքի հիմնատրման փորձ, Փարիզ, 1929, Ս. Վրացյանի նախաբանը, էջ 6:

քարձրագույն չափանիշ: XX դարի սկզբին Միխայլովսկու այս հայացքները նորկանտականության ու էմպիրիոկրիտիցիզմի գաղափարներով լրացրեցին Ն. Կարենը<sup>1</sup>, Վ. Չեռնովը<sup>2</sup>, Իվանով-Ռազումնիկը<sup>3</sup> և ուրիշներ:

Ըստ Սորոկինի՝ Միխայլովսկու հայացքների ուսումնասիրությանը նվիրված գրականության<sup>4</sup> մեջ Ֆրանզյանը Միխայլովսկու հայեցակարգը միանգամայն իրավացիորեն համեմատում է կանտականության, պոզիտիվիզմի, էմպիրիոկրիտիցիզմի ու պրագմատիզմի տեսությունների հետ, գտնում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները և ցույց տալիս Միխայլովսկու փիլիսոփայական աշխարհայացքի տրամաբանական լրիվությունն ու կանոնավորությունը: Բացի դրանից՝ Սորոկինն ընդգծում է, որ Ֆրանզյանը հրաշալի է լուծել իր առջև դրած խնդիրը՝ գերմանական մտավորականությանը ծանոթացնել Միխայլովսկու սոցիալ-փիլիսոփայական հայացքներին, որի իրականացմանը նպաստել են մի շարք հանգամանքներ՝ հեղինակի փիլիսոփայական կրթությունը, լավ ծանոթությունը Միխայլովսկու աշխատություններին ու նրա հայացքների վերլուծությանը նվիրված գրականությանը, նյութի համակարգված, կանոնավոր շարադրանքը և հմուտ վերլուծությունը:

Հարկ չհամարելով շարունակել հետագա վերլուծությունը՝ Սորոկինն ընդգծում է գրքի ռուսերեն թարգմանության անհրաժեշտությունը և հույս հայտնում, որ առաջիկայում այն լույս կտեսնի ռուսերենով:

Յավոք, Սորոկինի այս ցանկությունը չիրականացավ. Ֆրանզյանի աշխատությունը ռուսերեն թարգմանվեց, և հայ մտածողը չներկայացավ ռուս ընթերցողին, չնայած աշխատության հրատարակումից և Սորոկինի գրախոսականի տպագրումից անցել է մոտ 100 տարի: Այդ հարցն արդիական է նաև մեր օրերում, քանզի հայ տեսական միտքը համաշխարհային հանրությանը ներկայացնելու համար անհրաժեշտ է օտար լեզուներով թարգմանել հայ մտածողների աշխատությունները, մինչդեռ դրանք անհայտ են մնում նույնիսկ հայ ընթերցողին:

Սորոկինի հոդվածը “Заметки” և «Նոր հոսանք» ամսագրերում տպագրվելուց հետո այլևս չի հրատարակվել, ինչը պայմանավորված է նրանով, որ Ֆրանզյանը խորհրդային տարիներից արգելված ու մոռացության մատնված հեղինակ էր, որի մասին գրեթե ոչինչ չի գրվել: Այս առումով ներկայումս կարևոր է

<sup>1</sup> Ն. Ի. Կարենը (1850-1931) լիբերալ-նարոդնիկական ուղղության պատմաբան էր, սոցիոլոգիայում սուբյեկտիվ դայրոցի ներկայացուցիչ:

<sup>2</sup> Վ. Մ. Չեռնովը (1876-1952) սոցիալ-հեղափոխական կուսակցության աջ թևի առաջնորդներից ու գաղափարախոսներից մեկն էր:

<sup>3</sup> Իվանով-Ռազումնիկը (1878-1945) գրականագետ ու ռուս հասարակական մտքի պատմաբան էր, լիբերալ նարոդնիկության ներկայացուցիչ:

<sup>4</sup> Տե՛ս **Н. Бердяев**, Субъективизм и индивидуализм в общественной философии. Критический этюд о Н. К. Михайловском, СПб., 1901; **Н. Кареев**, Историко-философские и социологические этюды, СПб., “Издатель”, 1899; **Н. Кареев**, Н. К. Михайловский как социолог, “Русские ведомости”, 1900, № 318; **Н. Кареев**, Памяти Н. К. Михайловского как социолога, “Русское богатство”, 1904, № 3; **В. Чернов**, Философские и социологические этюды, М., 1907; **Иванов-Разумник**, История русской общественной мысли. Индивидуализм и мещанство в русской литературе и жизни XIX в., СПб., 1911; **Е. Колосов**, Очерки мировоззрения Н. К. Михайловского, СПб., 1912:

*ոչ միայն նրա ստեղծագործական ժառանգության ուսումնասիրությունը, այլև ժամանակին նրան տրված գնահատականների վերլուծությունը: Քանի որ Սո-րոկինի հոդվածն այսօր դարձել է մատենագիտական հազվագյուտ օրինակ, հարկ ենք համարում այն ներկայացնելու «Բանբեր»-ի ընթերցողի ուշադրու-թյանը՝ և՛ ռուսերեն, և՛ հայերեն՝ արդի ուղղագրությամբ:*

**Ա. Ն. ՕՂԻՅԱՆ**

**П. Сорокин, E. Frangian. N. K. Michailowsky als Philosoph und Soziologe, eine sozial-philosophische Studie, Berlin, 1913, "Заветы", СПб., 1914, № 1, с. 57-59.**

Идеи и теории имеют свою историю. То, что казалось нам не так давно "научной ересью" и вызывало у ряда лиц скептическую улыбку, а иногда и "компетентную научную" критику, то вдруг ожило в Западной Европе и сделалось в различных формах доминирующим течением её социально-философской мысли. Я разумею философско-социологические взгляды Н. К. Михайловского. Едва ли теперь кто станет спорить с тем, что основные принципы философии ценности (Риккерт, Виндельбанд, отчасти Коген, Штамлер, Наторп и др.), теории знания эмпириокритицизма (Мах, Авенариус), прагматизма (Джемс, Донеи, Шиллер, Пирс) и критического релятивизма (Петцольд, Зиммель), т. е. всего того, что теперь доминирует в сфере социальной и философской мысли, гораздо раньше было предвосхищено русской "субъективной" школой и, в частности, её главою Н. К. Михайловским. Мудрено ли поэтому, что по мере знакомства европейской мысли с мировоззрением Н. К. Михайловского возрастает и интерес к нему. Подтверждением сказанного служит увеличение литературы, посвящённой изложению и характеристике мировоззрения Михайловского.

Недавно появившаяся книга Франгяна является опытом сжатого систематического изложения системы Правды-Истины и Правды-Справедливости. Поскольку автор ставит своей задачей ознакомление немецкой мысли с философско-социологическими взглядами Михайловского — следует сказать, что эта задача им выполнена недурно. Мало того, хорошее знание автором Михайловского и главнейшей литературы о нём, его философское образование, позволяющее ему проводить параллели между взглядами Михайловского и вышеупомянутыми направлениями философско-социологической мысли, стройность и систематичность расположения материала делают книгу настолько интересной, что она не была бы лишней и для русского читателя, знакомого с работами о Михайловском В. М. Чернова, Иванова-Разумника, Колосо-

ва, Лункевича, Кареева и др. В первой части книги автор, после краткой биографии Н. К. Михайловского, систематически выясняет его теоретико-познавательную позицию. Взявши (вполне правильно) за отправной пункт понятие двуединой правды, он, путём сопоставления взглядов Михайловского с позитивизмом, кантианством и эмпириокритицизмом, показывает логическую целостность и стройность его философского мировоззрения.

Основным принципом философии Михайловского, по мнению Франгяна, является *позитивизм*, понимаемый в смысле философии “данности”, т. е. философии, имеющей дело с этой психологической данностью, исключительно как с “явлением”, примыкающей тем самым к имманентной школе в теории познания. В этом отношении Михайловский сходится с Кантом. Но постольку, поскольку Кант признавал бытие “вещи в себе”, с одной стороны, и поскольку он утверждал существование априорных категорий, независимых от опыта, с другой, постольку Михайловский расходится с ним и сближается в этом пункте с теоретиком “чистого опыта” Р. Авенариусом. Другая черта, характерная для Михайловского, это *релятивизм*: отрицание абсолютной Истины и признание только “человеческой” истины. И в этом пункте Михайловский предвосхитил философию относительности наших дней, особенно резко выдвинутую прагматизмом.

Из этих основных посылок сама собой вытекает и система двуединой правды, и необходимость “субъективного” метода, и отрицание Истины в смысле простого “отражения” существующего (*Nachbild-theorie\**), и все дальнейшие философско-социологические принципы теории борьбы за индивидуальность и теории прогресса, которые не менее умело изложены во второй части книги, озаглавленной “Социологическое учение Михайловского”. Социологический “субъективизм” Михайловского, вполне правильно отмечает Франгян, есть предшественник философии ценности Риккерта и Виндельбанда, философии долженствования (*Sollen\*\**), согласно которой теоретическое суждение обусловлено суждением ценности и представляет частный случай оценки вообще. Сам Франгян вполне согласен с этим принципом и, характеризуя горячие споры, вызванные “субъективизмом”, замечает, что “из этой продолжительной и трудной, но в то же время плодотворной борьбы “субъективная” школа вышла победительницей”.

Не излагая более подробно работу Франгяна, мы можем повторить, что верное понимание Михайловского, простое изложение его системы и умелая обработка материала делает желательным появление его книги на русском языке.

\* *Nachbild* – նմադրվածություն, *theorie* – տեսություն (գերմ.).

\*\* *Sollen* – պարտաժողով (գերմ.).

**Պ. Սորոկին, քննադատական Ե. Ֆրանգյանի N. K. Michailowsky als Philosoph und Soziologe, eine sozial-philosophische Studie, Berlin, 1913, գերմաներեն գրքի մասին, «Նոր հոսանք», Թիֆլիս, 1914, քիվ 2, էջ 309-311**

Գաղափարներն ու տեսություններն ունեն իրենց պատմությունը: Այն, ինչը ոչ հեռու անցյալում մեզ թվում էր «գիտական հերձված», և մի շարք մարդկանց մոտ սկեպտիկական ժպիտ, իսկ երբեմն էլ «անաչառ գիտական» քննադատություն էր առաջացնում, Արևմտյան Եվրոպայում հանկարծ կենդանացավ ու իր տարբեր ձևակերպումներով դարձավ նրա սոցիալ-փիլիսոփայական մտքում գերիշխող հոսանքը: Խոսքս վերաբերում է Ն. Կ. Միխայլովսկու փիլիսոփայական-սոցիոլոգիական հայացքներին: Այժմ հազիվ թե գտնվի որևէ մեկը, որ մեզ հետ վիճի, թե արժեքի փիլիսոփայության (Ռիկերտ, Վինդեբանդ, մասամբ՝ Կոհեն, Շտամբեր, Նատորպ և ուրիշներ), էմպիրիոկրիտիցիզմի իմացության տեսության (Մախ, Ավենարիուս), պրագմատիզմի (Ջեմս, Դոնեի, Շիլլեր, Պիրս և այլն) և քննադատական ռեյատիվիզմի (Պետցոլդ, Ջիմմեյ) հիմնական սկզբունքները, այսինքն այն ամենը, ինչն այժմ գերիշխում է սոցիոլոգիական և փիլիսոփայական մտքի աշխարհում, ավելի վաղ հայտնագործված են եղել ոռու «սուբյեկտիվ» դպրոցի և մասնավորապես նրա գլուխ Միխայլովսկու կողմից: Այդ պատճառով զարմանալի չէ, եթե եվրոպական միտքը Միխայլովսկու աշխարհայեցողության հետ ծանոթանալուց հետո նրանով ավելի ևս հետաքրքրվի: Խոսքերիս հիմք կարող է ծառայել Միխայլովսկու աշխարհայեցողության վերլուծությանն ու բնույթին նվիրված գրականության անը:

Ե. Ֆրանգյանի՝ մոտ ժամանակներս լույս տեսած գիրքը (Բեռլինում) Միխայլովսկու Ռավա-ճշմարտության և Ռավա-Արդարության համակարգի վերլուծության համակարգված սեղմ փորձ է: Պետք է ասել, որ հեղինակը, որքանով իր առջև նպատակ է դրել գերմանական մտավորականությանը ծանոթացնել Միխայլովսկու փիլիսոփայական ու սոցիոլոգիական հայացքներին, լավ է լուծել այդ խնդիրը: Բացի դրանից՝ հեղինակի լավ ծանոթությունը Միխայլովսկու և նրա մասին եղած ամենանշանավոր գրականությանը, հեղինակի փիլիսոփայական կրթությունը, ինչը նրան թույլ է տալիս զուգահեռներ անցկացնել Միխայլովսկու հայացքների և փիլիսոփայական-սոցիոլոգիական մտքի վերոհիշյալ ուղղությունների միջև, ապա նյութի համակարգված, ներդաշնակ և կանոնավոր շարադրանքը նրա գիրքն այնքան հետաքրքիր են դարձնում, որ նա ավելորդ չէր լինի նույնիսկ ոռու այն ընթերցողի համար, որը ծանոթ է Միխայլովսկու մասին Վ. Մ. Չեռնովի, Իվանով-Ռազումնիկի, Կոլոտովի, Լուկկիչի, Կարենի և այլ աշխատությունների հետ: Գրքի առաջին մասում հեղինակը Միխայլովսկու հակիրճ կենսագրականից հետո համակարգված պարզաբանում է նրա տեսական-իմացաբանական դիրքորոշումը: Իբրև ելակետ ընտրելով կրկնակի Ռավա-ի գաղափարը (ինչը միանգամայն ճիշտ է)՝ հեղինակը Միխայլովսկու հայացքները բաղդատում է պոզիտիվիզմի, կանտականության ու էմպիրիոկրիտիցիզմի հետ և ցույց տալիս նրա փիլիսոփայական աշխարհայեցողության տրամաբանական լրիվությունն ու կանոնավորությունը:

Միխայլովսկու փիլիսոփայության հիմնական սկզբունքը, ըստ Ֆրանգյանի, *պոզիտիվիզմն* է՝ վերցված «տրվածության» փիլիսոփայության ի-

մաստով, այսինքն՝ այն փիլիսոփայության, որը գործ ունի հոգեբանական տրվածության՝ բացառապես որպես «երևույթի» հետ, և որով նա մոտենում է իմանենա դպրոցի իմացության տեսությանը: Այդ տեսակետից Միխայլովսկին մոտ է Կանտին: Բայց որքանով Կանտը մի կողմից ընդունում էր «ինքնին իրի» կեցությունը, մյուս կողմից՝ ճանաչում փորձից անկախ ապրիորի կատեգորիաների գոյությունը, այնքանով Միխայլովսկին տարբերվում է Կանտից ու մոտենում զուտ փորձի տեսաբանին՝ Ռ. Ավենարիոսին: Միխայլովսկու փիլիսոփայական աշխարհայեցողության մյուս բնորոշ գիծն է *ռեյաստիվիզմը*՝ բացարձակ ճշմարտության ժխտումը և միայն «մարդկային» ճշմարտության ընդունումը: Եվ որքանով նա կանխատեսել է մեր օրերի հարաբերականության փիլիսոփայությունը, ինչը հատուկ սրությամբ առաջադրել է պրագմատիզմը:

Այս հիմնական դրույթներից ինքնըստինքյան բխում է և՛ կրկնակի ճշմարտության համակարգը, և՛ «սուբյեկտիվ» մեթոդի անհրաժեշտությունը, և՛ գոյության պարզ «արտացոլման» իմաստով վերցված ճշմարտության ժխտումը, և՛ մյուս բոլոր փիլիսոփայական-սոցիոլոգիական սկզբունքները, ինչպիսիք են անհատականության պայքարի և առաջընթացի տեսությունները, որոնք ոչ պակաս հմտորեն վերլուծված են Ֆրանգյանի գրքի երկրորդ մասում, որ կրում է «Միխայլովսկու սոցիոլոգիական ուսմունքը» վերնագիրը: Միխայլովսկու «սոցիոլոգիական սուբյեկտիվիզմը», ինչպես միանգամայն ճիշտ նկատում է Ֆրանգյանը, Ռիկերտի ու Վինդեյբանդի արժեքների փիլիսոփայության նախորդն է, «Sollen»-ի փիլիսոփայության, որի համաձայն՝ տեսական դատողությունը պայմանավորվում է արժեքի դատողությամբ և ընդհանրապես արժևորման մասնավոր դեպքն է: Ինքը՝ Ֆրանգյանը, լիովին համաձայն է այդ սկզբունքին և բնորոշելով «սուբյեկտիվիզմի» առաջացրած բուռն վեճերը՝ նկատում է, որ «այդ շարունակական և դժվարին, բայց միևնույն ժամանակ արգասավոր պայքարից սուբյեկտիվ դպրոցը դուրս եկավ հաղթանակող»:

Այլևս ավելի մանրամասն չվերլուծելով Ֆրանգյանի աշխատությունը՝ մենք կրկնում ենք, որ Միխայլովսկու փիլիսոփայության ճիշտ ըմբռնումը, նրա համակարգի պարզորոշ վերլուծությունը և նյութի հմուտ մշակումը ցանկալի են դարձնում նրա գրքի նաև ռուսերեն հրատարակումը:

**С. Н. ОГАНЯН - Питирим Сорокин о Ерванде Франгяне.** - Фило-соф, обществовед, общественный и политический деятель Ерванд Франгян - крупнейший представитель широко распространённого в начале XX века в Армении второго позитивизма (махизм, эмпириокритицизм). Ещё при жизни его произведения получили признание со стороны не только армянских, но и европейских и русских мыслителей. В 1913 г. в Берлине была опубликована книга Е. Франгяна “Михайловский как философ-социолог”, которая вскоре вызвала внимание одного из величайших теоретиков современной социологии Питирима Сорокина. В 1914 г. в журнале “Заветы” (Санкт-Петербург) была опубликована его рецензия на книгу Е. Франгяна, которая была переведена на армянский язык и опубликована в журнале “Новое течение” (Тифлись). Так как статья П. Сорокина является библиографической редкостью, мы сочли необходимым представить её вниманию читателя.